

Թանն էլ իմ ձեռքից կառնէ քաղաքը»: Ձկները, դժբախտաբար, սաղնում—խաղում են, և քաղաքն էլ առնւում է:

Այսինքն է ինչպէս Տարսիսը: Համշէնցիներն ընդունում են, որ բացի մեր պէս սովորական մարդկանցից, սարերում կան և «Վէ՛րի-սարի» մարդիկ, ինչպէս և կան մալերի վայրի տեսակներ: Պատմում են, թէ սարերում իրանց աջողուել է տեսնել այդպիսիներին, որոնք ամբողջապէս ոտից գլուխ մազոտ, անլեզու և խպետ արարածներ են, մարդկանցից փախչում են և իրարից հեռու և ջուկ ապրում:

Պատմում են էլի. թէ իրանց Հայրենիքում, Սինօպի կողմերում մի ժամանակ ապրելիս են եղել մի տեսակ վայրենի, աժդահայ հսկայ մարդիկ, որոնք երկու աչքի տեղ՝ մի Հատ խոշոր աչք են ունեցել ձակտի մէջ տեղը, այսպէս կոչուած՝ «Գէ՛"փէ՛"զեօզներ» —կամ միականիներ:

XI. Ս ր ք ե ր .

Սուրբ Կար. Մէկ օր Յիսուսը կորել էր. Մարիամը ման էր դալիս՝ որ գտնէ: Գալիս Հասնում է մի գետի մօտ, որի ձայնը աշխարհ էր բռնել: Մարիամը Հրամայում է գետին որ ձայնը կտրէ, և գետն էլ տեղն ու տեղը լուծւում է: (Գետի անունը չը գիտեն, բայց Հաւանական է՝ Յորդանանի Համար լինի աւանդութիւնը):

Սուրբ Սարգիսը: Պատմում են, որ առաջաւորաց պատի շարքում ս. Սարգիսը եօթը «Հօրում» և մէկ Հայ պիտի խեղդէ՝ ձնի ու բքի Հանդիպեցնելով նրանց: Յոյներն այդ շարքում ոչ միայն պատ չեն պահում, այլ «Ինադու» չորեքշաբթին և ուրբաթն էլ են ուտում:

Մէկ անգամ այդ շարքում մէկ յոյնի բռնում ու ստիպում են, որ պատ կենայ: Գցում են ամբարը, բայց «Ինադ Հօրումը» բան չը գտնելով՝ իր տրեխներն է կրճում, որ չասուի, թէ պատ է պահել:

«Խորեշէդ» —սուրբ Գեորգը: Զատերը մինչև այսօր էլ Հայրենական սովորութիւնով «մեծ կիրակի» են Համարում ապրի-

լի 23, երբ տօնւում է յունաց «խնդրելէզը»: Զարմանալի է՝ որ այդ սրբի մասին ոչ մի աւանդութիւն չունին, ոչ էլ այդ սրբի համար հայոց եկեղեցու լիշատակած օրը գիտեն: Չատերը նոյն իսկ չը գիտեն, թէ «խնդրելէզը» մեր ս. Գէորգն է, բայց էլի այդ օրը սաստիկ «մեծ կիրակի» են բռնում և յամառութիւնով շարունակում են հայրենական տօնը պահելու: Բոլոր աւանդութիւններն և նախապաշարումները միայն այդ օրը կիրակի բռնելուն ու չը բռնելուն են վերաբերում: Հայրենիքում, իրանց պատմելով, այդ օրը չը բռնող չը կայ. հայ, յոյն, տաճիկ այդ օրը ամենքը անխախտ կիրակի են պահում: Այդ սովորութիւնը իրանց հետ բերել են և իրանց նոր տեղերը: Այդ օրը նրանք շատ իրիստ են պահում: Ոչ մի տօն և կիրակի օրով բանեւոյց այնքան չեն վախում, ինչքան այդ օրուայ բանեւոյց: Այդ օրը բանողը մեծ վնասի կը հանդիպի, գործը աջող չի գնալ, «ծռի կու»: Հերկ անողի կամ խոփը կը կոտրի, կամ արօրը, կամ արտը բերք չի տալ փորողի՝ կամ փետատը կը կոտրի, կամ բանը. ցանածը կամ մուր կը լինի, կամ մուկն ու ճիճուն կուտեն, չի բուսնիլ. ինքը բանողն էլ, կին թէ տղամարդ, կը հիւանդանայ, ցաւի կը հանդիպի. կամ երեսը կը ծռի, կամ ձեռքը կը կոտրի, կամ թէ յդի լինի, երեխան կը ծռի և ալլն: Մէկ խօսքով ամեն տեսակ ցաւ ու ձախորդութիւն կը թափէ նրա գլխին «խնդրելէզը»: Արդէն իրանց մէջ այդ տեսակ շատ օրինակներ են տեսել և շատ պատմութիւններ են պատմում:

Հայր Աբրահամ: Հայր Աբրահամը մի չօրան ունէր. այդ չօրանը երեք հաց-պաշար ունէր մօտը: Հաց ուտելու ժամանակը որ գալիս է, միտք է անում, թէ կարելի է այս «սարին» մի քաղցած մարդ պատահի, մի քիչ էլ սպասեն»:

Սպասում է, ճիշտ որ մի քաղցած մարդ է գալիս նրա մօտ. հացի մէկը նրան է տալիս: Մի քիչ յետոյ, մի ուրիշ քաղցած է գալիս. հացի մէկն էլ նրան է տալիս. իրան մէկ հաց է մնում: Բայց էլի չի ուզում մենակ ուտել. մտածում է, եթէ մի քաղցած մարդ էլ գայ՝ ոչխարը կ'թէ, հացն էլ իրար հետ բրդեն, ուտեն: Այդպէս էլ լինում է. գալիս է մի ուրի-

շը, հաց է ուզում: Զօրանը նրան ասում է. «Նստիր, միասին ուտենք»: Նստում են հացի: Զօրանը մի լաւ կլթուող ոչխար ունէր. ման է դալիս, չի գտնում: Այն ժամանակ հիւրն ասում է նրան. «Մօտի ոչխարը կլթիր»:— «Կաթ չունի, «կըսըր» (ամուլ) է, ասում է չօրանը:— Դու կլթիր, կտեսնես, կըկնում է նորեկ հիւրը: Զօրանի խելքը գնում է. եօթը տարուան ամուլ ոչխարը նործին կլթուանի պէս կաթ է տալիս: Ինչ որ է՝ ուտում են, խմում, յետ նստում: Հիւրն ասում է չօրնին. «Հիմա ինչ փափագ որ ունիս, ասա»:— Նա էլ, թէ՛ «Բնջ ասեմ. քեզ լաւ յալտնի է»: Հիւրը խաչակնքում է չօրնին, նա իսկոյն սպիտակում է. յետոյ ոչխարներին է խաչակնքում, նրանք էլ են սպիտակում:

Հայր Աբրահամի միտքն է դալիս չօրանը: Պաշարը վերցնում, գնում է նրա յետեւից: Իր չօրնի մօտից անցնում է, բայց չի կարողանում ճանաչել: Գնում է ուրիշ չօրաններից հարցնելու իր խաշների տեղը: Նրանք էլ ցոյց են տալիս: Աերջապէս մանգալով դալիս է իր չօրնի մօտ և ասում նրան. «Ասա, թէ գիտես, ինչ պատահեց իմ չօրնին, որ չեմ կարողանում գտնել»: Նա էլ ասում է. «որ տեսնես՝ կը ճանաչես»: Հայր Աբրահամն ասում է. «Թե՛ վրայ մի նշան ունի. որ տեսնեմ՝ կը ճանաչեմ»: Այդ լսելուն պէս՝ չօրանը թեւը բաց է անում. Աբրահամը ճանաչում է: Զարմացած՝ Հայր Աբրահամն հարցնում է նրան. «Այս շնորհքը Բնջպէս ձեռք բերիր»: Զօրանն էլ ասում է, թէ «քո երեք հացովը»: Հ. Աբրահամն ասում է նրան. «Այդ շնորհքը ինձ տուր»: Զօրանն էլի ասում է. «Ես որ երեք հացով այս շնորհքը դտայ, դու ահագին կարողութիւնովդ ինչի՞ չես գտնում»: Դրանից յետոյ Հ. Աբրահամն էլ գնում է սարը, մտքումը դնելով՝ որ առանց հիւրի հաց չուտէ: Բայց սատանան հակառակում է նրան. 40 օր ճանապան կապում է. որ հիւր չը գայ նրա մօտ: Ահինը շարունակ կըկնում է նրան, թէ «այ մարդ, հերիք սպասեցիր. հաց կեր, քաղցած մեռար», բայց նրան ականջ չի կախում:

Քառասներորդ օրը որ դալիս է, Հ. Աբրահամն ասում է կնոջը. «Ել գնա՛, դուրսը նայիր, տես թէ մարդ դալիս է»:

Այինը գնում է, նայում, տեսնում է որ մէկը գալիս է՝ ոչ երկնքից է, ոչ գետնից: Այդ որ լսում է, Հ. Աբրահամը պատուիրում է կտրել հորթը և ուտելիք պատրաստել:

Հիւրը գալիս է, հացը որ ուտում, պրծնում են, կովը հանդից գալիս, բառանջում է դռանը: Հիւրը հարցնում է Աբրահամին. «Ինչի է կովը այդքան բառանջում»:— «Տէր, քեզ յայտնի է», ասում է նա: Այդ որ լսում է՝ հորթի գլուխը, ոտներն ու ոսկորները փոստի մէջ լցած՝ բերել է տալիս իր մօտ: Հիւրը փչում ու խաչակնքում է նրան. հորթը հողի է առնում և գնում մօրը ծծում:

Ելեա յաբգաբէն: Յիսուսը երբ երկինք է համբառնում, Եղիա մարգարէին հարցնում է, թէ իրանից լիտոյ քանի անգամ պիտի գնայ երկրի վրայ: Մարգարէն ասում է, թէ եօթն անգամ պիտի գնայ: Առաջին անգամին պիտի գնայ «բէ՛րէ՛»-քէ՛թը» կտրի աշխարհքից. երկրորդ անգամին՝ սէրը պիտի հեռացնի մարդկանցից, նրանց պիտի իրար զգէ. երրորդին՝ ամօթը պիտի վերցնէ մարդկանցից. չորրորդին՝ ջրերը պիտի փրչացնէ... (Մնացածը պատմողը չէր լիշում):

«Թօփալ» Լաբապետ: Եօթը վարդապետ պասն ու ուտիսն էին ջոկում: Դրանցից վեցը առաջ էին եկել, մէկը «Թօփալ» էր, լիտ էր մնացել: Առաջ եկողները մեծ պասը եօթն օր են որոշում, լիտից գալիս հասնում է «Թօփալը». նրան որ յայտնում են իրանց որոշումը, նա իբր թէ չի լսում ու հարցնում է. «Ինչքան. եօթը շաբաթ»:— Էհ, կուզես քո ասածը լինի, ասում են դրանք ու նշանակում:

Պատմում են էլի, թէ Հին Ժամանակ վարդապետները ցորենի հացը պաս էին դրել: Այդ որ իմանում է «Թօփալ» վարդապետը, գալիս յանդիմանում է նրանց, որ ցորենի հացն էլ պաս են դնում: Եւ իսկոյն, նրանց աչքի առջև, լծում է եզներ և մտնում ծովը ցելում: Դուրս է գալիս և նրանց ասում. «Հիմի էլ դուք գնացէք իմ ցելած տեղերը ցանեցէք»: Նրանք զարմանքից քարացած՝ տեղից չեն շարժւում: Տեսնում էք, ասում է «Թօփալը», դուք որ այդքան բանից վախենում էք, ինչպէս էք համարձակւում ցորենի հացի պէս բանն էլ

պատ դնել»։ Դրանից դէսն է, որ ցորենի հացը պատճեն համարում։

X. Չար ոգիներ. — Սասանայ

Համշէնցի հայը խոր համոզուած է, որ բնութեան մէջ չար ոգիներ կան, որ Արարչից անկախ և Նրան հակառակ՝ գոյութիւն ունի մի չար զօրութիւն, որ ամեն կերպ աշխատում է խել մարդկային ազգը Աստուծո ձեռքից, նրան փորձանքի մէջ գցել, մատնելով նրան յաւիտեանական տանջանքին։ Մարդկանց տանջանքը նրա միակ նպատակն ու ուրախութիւնն է։ Նոյն իսկ թէև լսել է, որ մարդկանց հասած բոլոր աղէտները մեր «մեղքերի» համար են գալիս Աստուծոց, բայց երբեմն էլ դրանց ուղղակի վերագրում է աւելի բնութեան մէջ եղած չար ոգուն, սատանի գօրութեան, քան բարի Արարչին։ Որին դիմում է միայն չարի ներդործութիւնը մեղմացնելու և զգացնելու համար։ Դիշտ է՝ նա Արարչին չարից աւելի մեծ է համարում, բայց նրան չարն աւելի է վնասում, նա այդ չարից, սատանայից աւելի է վախում, քան իր Արարչից։ Աստուած թէ որ միւս կեանքում պիտի պատժէ նրան, սատանան ուղղակի այստեղ է փորձանք բերում նրա գլխին, նրան նեղութեան մէջ գցում։

Բոլոր չար գօրութիւնների աղբիւրը նա համարում է սատանին, որ երբեմն իբրև «փէրի» ու «ջին» — խաբում է ջահէլ պատանիներին ու երիտասարդներին, իբրև «ջատու պառաւ» — խեղդում է օրօրոցի երեխաներին, իբրև «ալ» — գալիս նստում է քնած մարդկանց վրայ, աշխատելով խեղդել նրանց, իբրև «խորթլաղ» («գոռնադաբ») — մեղաւոր մեռելներին անգամ հանգիստ չի թողնում գերեզմաններում, վեր հանում, ման է բերում նրանց գիշերներով։

Ով էլ լինի, կին թէ տղամարդ, տանը թէ դուրսը, ճանապարհին, թէ ջրի մօտ, հիւանդ թէ առողջ, — բոլորը ենթակա են նրա փորձութեան։ Ինչ տեսակ վատ ու չար բան որ լինում է, բոլորը նրա ուզելովն է, ինչ ցաւ, ինչ փորձանք,